


Մաթեմատիկայի օլիմպիադա (15.12.2020թ.)

Դպրոցական փուլ

5 -րդ դասարան /տևությունը 150 րոպե/

- Գտնել երկնիշ գույգ թվերի քանակը:  
1) 90                      2) 45                      3) 44                      4) 89
- Գտնել 36-ի և 84-ի ընդհանուր բաժանարարների քանակը:  
1) 4                      2) 5                      3) 6                      4) այլ պատասխան
- Քանի՞ հատ երկնիշ թիվ կա, որոնց գրառման մեջ առկա է 3 թվանշանը:  
1) 20                      2) 19                      3) 18                      4) այլ պատասխան
- 10000-ից փոքր և 10-ից մեծ քանի՞ բնական թիվ կա, որոնց թվանշանների գումարը 2 է:  
1) 9                      2) 8                      3) այլ պատասխան                      4) 7
- Գտնել 1.23.....9394 (բազմակետերի փոխարեն հերթականությամբ բոլոր բնական թվերն են, մինչև նշված թվերը) արտադրյալի վերջին թվանշանը:  
1) 2                      2) 4                      3) 3                      4) 0
- Մտապահված թիվը բազմապատկեցին 8-ով, այնուհետև ստացված թվից հանեցին 5 և ստացվեց 13-ից 7 անգամ մեծ թիվ: Գտնել մտապահված թիվը:  
1) 91                      2) 12                      3) 96                      4) 86
- Ի՞նչ թիվ պետք է գրել ? նշանի փոխարեն, որպեսզի տեղի ունենա հետևյալ հավասարությունը  $28x3x14x2=42x?$ :  
1) այլ պատասխան                      2) 28                      3) 14                      4) 56
- Քանի՞ հատված կա նշված գծապատկերում:   
1) 4                      2) 5                      3) 10                      4) 9
- 1-ից մինչև 100 բնական թվերի շարքում, որքանո՞վ է գույգ թվերի գումարը մեծ կենտ թվերի գումարից:  
1) 50-ով                      2) 100-ով                      3) հավասար են                      4) այլ պատասխան
- Յուրաքանչյուր րոպեում զամբյուղում եղած խնձորների թիվը կրկնապատկվում է: 12 րոպե հետո զամբյուղը լցվում է: Որքա՞ն ժամանակ հետո այն կհստվ չափ կլցվի:  
1) 6                      2) 11                      3) 10                      4) 9
- 3 մարդ 4 օրում հավասարաչափ ուտում են 24 կգ սնունդ: 8 մարդ 2 օրում քանի՞ կգ սնունդ հավասարաչափ կուտեն:  
1) 24                      2) 32                      3) 16                      4) 48
- 2019 բնական թվերի գումարը 2020 է: Գտնել այդ բնական թվերի արտադրյալը:  
1) 2                      2) 2020                      3) այլ պատասխան                      4) 2019

13. Նշված թվերից ո՞րը կարող է լինել երկու հաջորդական բնական թվերի արտադրյալի վերջին թվանշան:
- 1) 5                                      2) 9                                      3) 0                                      4) 3
14. Հաղորդալարի մի կտորը 6 անգամ կարճ է երկրորդից, իսկ երկրորդ կտորը 125 մ-ով երկար է առաջինից: Գտնել երկրորդ կտորի երկարությունը:
- 1) 150                                      2) 125                                      3) 25                                      4) 50
15. Քանի՞ եռանիշ թիվ կա, որոնց թվանշանները ձախից աջ մեծանում են:
- 1) 7                                      2) 28                                      3) 13                                      4) այլ պատասխան
16. 2020 ճառագայթներից մի քանիսը սպիտակ են, իսկ մի մասը՝ սև: Հայտնի է, որ ճառագայթներից գոնե մեկը սև է, իսկ կամայական երկու ճառագայթներից գոնե մեկը սպիտակ: Գտնել սև ճառագայթների քանակը:
17. Մեկ նարինջը և երկու բանանը միասին արժեն 800 դրամ, իսկ նույն տեսակի մեկ բանանը և 2 նարինջը միասին արժեն 700 դրամ: Որքա՞ն արժե մեկ նարինջը:
18. Երկու գնացքներ, որոնցից յուրաքանչյուրն ունի 250 մ երկարություն և 45 կմ/ժ արագություն, շարժվում են հակառակ ուղղություններով և անցնում են իրար կողքով: Քանի՞ վայրկյան կտևի անցումային այդ ժամանակը:
19. Արմենը վիճակահանության կտրոնի վրա նկատեց, որ նրա հերթական համարը՝ 31513, աջից ձախ և ձախից աջ նույն կերպ է կարդացվում (սիմետրիկ թիվ): Քանի՞ հնգանիշ սիմետրիկ համարով վիճակահանության կտրոն կարող է լինել:
20. Նկարում պատկերված յուրաքանչյուր ուղղանկյան ներսում գրված է նրա պարագիծը: Գտնել դատարկ ուղղանկյան պարագիծը:

|    |    |
|----|----|
| 24 | 18 |
| 41 |    |